ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲՄԱՇՁԲ-10/6-1

ք. Երևան «01» 07 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից, և «Սաշիկ և Սևակ եղբայրներ» ՍՊԸ-ն ի դեմս ընկերության տնօրեն Խ. Սիմոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կապալառու, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ *20.12.2019թ.*

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365** օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր առավելագույն գինը կազմում է *100 000 000 (մեկ հարյուր միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն*: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն ընտրված մասնակցի կողմից գնային առաջարկով աշխատանքների համար սահմանված միավորի գների հանրագումար նշված գինն է, **որը կազմում է 7 969 800 ՀՀ դրամ:**

ՆԳ-ն Պատվիրատուի կողմից ընթացակարգի հրավերով ներկայացված ծավալաթերթով նախատեսված աշխատանքների համար սահմանված միավորի նախահաշվային գների հանրագումար նշված գինն է, **որը կազմում է 9 005 446 ՀՀ դրամ,**

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3

(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի

լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Սաշիկ և Սևակ եղբայրներ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	Ք. Գավառ Արծվաքար թաղ.
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Յունիբանկ» ԲԲԸ Գավառ մ/ճ
Հ/հ 900011117034	Հ/Հ 24134001708600
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 08415376
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱԺԲԱՐՅԱՆ	Խ. ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված N 1
ԲՄԱՇՁԲ-10/6-1 *ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
ԱՅԼ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/հ	Հիմնավորում	Աշխատանքի (ծառայության) անվանումը	Չափման միավորը	Գինը, ներառյալ վերադիր ծախսեր, շահույթ, հազար դրամ
1		3	4	6
		1.Հողային, հորատման, քանդման և ապամոնտաժման աշխատանքներ		
1	Կ1-1671 11-15	Գրունտի մշակում էքսկավատորով, կողլիցք, շերեփի տարողությունը 0,5խմ, գրունտ 3 կարգ	100մ³	73.563
2	Կ1-1672 11-16	Գրունտի մշակում էքսկավատորով, կողլիցք, շերեփի տարողությունը 0,5խմ, գրունտ 4 կարգ	100մ³	95.877
3	Կ1-1673 11-17	Գրունտի մշակում էքսկավատորով, կողլիցք, շերեփի տարողությունը 0,5խմ, գրունտ 5 կարգ	100մ³	131.39
4	Կ1-1718 30-7	Գրունտի մշակում մինչև 228կվտ (310ձ.ու) հզորության բուլդոզերով, տեղափոխելով այն մինչև 10մ, 3 կարգի գրունտ	100մ³	13.354
5	Կ1-1727 31-3	Խրամուղիների և փոսորակների ետլիցք մինչև 59կվտ (80ձ.ու) հզորության բուլդոզերով, տեղափոխելով մինչև 5մ, գրունտ 3 կարգ	100մ³	11.854
6	Կ1-961	Գրունտի մշակում ձեռքով խրամուղիների՝ մինչև 2մ խորությամբ, առանց ամրակապման, թեքություններով, և փոսերի փորում մինչև 1,5մ խորությամբ, 3 կարգ գրունտներում	մ³	2.281
7	Կ1-962	Գրունտի մշակում ձեռքով խրամուղիների՝ մինչև 2մ խորությամբ, առանց ամրակապման, թեքություններով, և փոսերի փորում մինչև 1,5մ խորությամբ, 4 կարգ գրունտներում	մ³	4.023
8	Կ1-968	Ետլիցք ձեռքով կոշտուկների փխրեցումով ու տոփանումով խրամուղիների, փոսորակների և փոսերի 2 կարգ գրունտներում	մ³	0.953
9	Կ1-969	Ետլիցք ձեռքով կոշտուկների փխրեցումով ու տոփանումով խրամուղիների, փոսորակների և փոսերի 3 կարգ գրունտներում	մ³	1.161
10	հաշվ. q=0,7	Ժայռագրունտի փխրեցում մեխանիզացված եղանակով, գրունտ 5-րդ կարգի	մ³	9.92
11	Կ27-33	Ասֆալտբետոնե ծածկույթների քանդում	100մ³	438.347
12	Կ27-35	Եզրաքարերի քանդում իր հիմնատակով	100մ	91.237
13	Կ46-77	Բետոնե և խամքարաբետոնե հիմքերի քանդում	մ³	48.669
14	Կ46-(188-190) կիրառ	20-39մմ տրամագծով, 200մմ խորությամբ հորիզոնական անցքերի գայլիկոնում ե/բետոնե կառուցատարրերում ալմաստային օղաձև գայլիկոններով, սառեցնող հեղուկի օգտագործմամբ	100 հատ	103.175
15	Կ46-(204-206) կիրառ	Ավելացնել կամ պակասեցնել ամեն 10մմ խորության փոփոխ ման 20-39մմ տրամագծով անցքերի համար	100 հատ	1.876
16	Կ46-(191-195) կիրառ	40-69մմ տրամագծով, 200մմ խորությամբ հորիզոնական անցքերի գայլիկոնում կառուցատարրերում ալմաստային օղաձև գայլի կոններով, սառեցնող հեղուկի օգտագործմամբ	100 հատ	141.624
17	Կ46-(208-211) կիրառ	Ավելացնել կամ պակասեցնել ամեն 10մմ խորության փոփոխման 40-69մմ տրամագծով անցքերի համար	100 հատ	2.51
18	շուկա	Ամբարձիչ մեքենայի, կռունկի ծառայություն	ժամ	5.11
19	23-77 23-226 գն.3	Ապամոնտաժված նյութերի, շին աղբի և ավելացված բնահողի կուտակում, բարձում ձեռքով ինքնաթափ մեքենաները և տեղափոխում, մինչև 1կմ	տն	3.015
20	գն.3	Ապամոնտաժված նյութերի, շին աղբի և ավելացված բնահողի տեղափոխում, մինչև 1կմ	տն	0.919

21	գն.3	Ավելացնել լրացուցիչ 1կմ տեղափոխման համար (միավորի արժեքը x հեռավորության երկարության հետ; Մ/արժեքx(n-1), որտեղ n-ը կուտակույտի բարձման տեղից մինչև թափոնատեղը ընկած տարածության երկարությունն է կմ-ով)	տն		0.17
22	Կ27-22-1	Նախապատրաստական և հարթեցնող շերտի իրականացում խճով, առանց նյութերի արժեքի, ներքնաշերտի համահարթեցում, տոփանում, խճի ցրում հարթեցում, գլդոնում՝ հարթ թմբուկներով 6,5տ և 10,0տ; պնեվմատիկ դողերով 18,0տ և ջրում /ծախսը՝ խիճ 1,26խմ, ջուր 0,07խմ/	մ³		2.817
23	Կ27-170, Կ27-171 Կ27-170-1 Կ27-171-1	Երկշերտ ծածկույթի ներքին կամ վերին շերտի/ 1շերտի հաստ. մինչև 6սմ/ իրականացում ա/բետոնե խառնուրդներով տեղական նշանակության ճանապարհներում և մայթերում, հաստ. ըստ տեղային պահանջի, առանց նյութերի արժեքի (հիմնատակի մաքրում, կցվածքների քսում հանքաձյութով, ա/բետոնի խառնուրդի փռում առանց ասֆալտափոխիչների, և խտացում գլդոնումով 6,5տ) /ծախսը՝ հանքաձյութ 0,06տ ա/բետոնի ըստ տիպի և մակնիշի, խտացված վիճակում 0,5սմ ~1,2տ/	100մ²		17.762
24	Կ6-309	Ծանր Վ7,5; 12,5;15;20;22,5 դասի բետոնի պատրաստում տեղում առանց բաղադրիչների արժեքի /ծախսը՝ խիճ 0,8խմ; ջուր 0,21խմ, ավազ 0,58;0,57;0,53;0,5;0,47 խմ; ցեմենտ Մ400 դասի /CEM-II/A-P, 42,5N/ 214;235;286;332; 382 կգ/	մ³		5.257
25	Կ33-471 q=0,5	Օդային գծերի էլեկտրական հաղորդալարերի ապամոնտաժում (1կմ-ում 22 հենականգնակի դեպքում, մինչև 1կվ լարում)	կմ		31.273
26	Կ33-476 q=0,5	Հենականգնակների քանակի փոփոխման դեպքում ավելացնել կամ պակասեցնել (Հեն.փաստացի -22 հատ=n հատ 1կմ-ի համար; մինչև 1կվ լարում)	հատ		1.094
27	Կ33-472 q=0,5	Օդային գծերի էլեկտրական հաղորդալարերի ապամոնտաժում (1կմ-ում 12 հենականգնակի դեպքում, 6-10կվ լարում, բնակեցված տարածքում)	կմ		113.489
28	Կ33-477 q=0,5	Հենականգնակների քանակի փոփոխման դեպքում ավելացնել կամ պակասեցնել (Հեն.փաստացի --12 հատ=n հատ 1կմ-ի համար; 6-10կվ լարում, բնակեցված տարածքում)	հատ		7.542
29	Կ33-473 q=0,5	Օդային գծերի էլեկտրական հաղորդալարերի ապամոնտաժում (1կմ-ում 10 հենականգնակի դեպքում, 6-10կվ լարում, չբնակեցված տարածքում)	կմ		57.319
30	Կ33-478 q=0,5	Հենականգնակների քանակի փոփոխման դեպքում ավելացնել կամ պակասեցնել (Հեն.փաստացի --10 հատ=n հատ 1կմ-ի համար; 6-10կվ լարում, չբնակեցված տարածքում)	հատ		3.588
31	Կ33-401 q=0,8	Փայտե հենասյան ապամոնտաժում (դիմակալի առկայության դեպքում հաշվել որպես լրացուցիչ հենասյուն)	հատ		6.018
32	Կ33-445 q=0,8 աղ.33- 108-1	Երկաթբետոնե հենականգնակների ապամոնտաժում ՕԳ 6-10 կվ, միականգնակ	հատ		8.24
33	Կ33-408 Կ33-401 /տարբ/ q=0,8	Օդային գծերի երկաթբետոնե կցուրդների ապամոնտաժում (0,4կվ լարում)	հատ		4.134
34	Կ33-519 q=0,5	Օդային գծի հենականգնակի 6-10կվ պարպիչի ապամոնտաժում	լր		10.084
35	Կ33-520 q=0,5	Օդային գծի հենականգնակի 6-10կվ զատիչի ապամոնտաժում	լր		13.284
36	Կ33-530	Ապամոնտաժված երկաթբետոնե կցուրդների փոխադրում ուղեգծով	հատ		8.122
37	Կ33-531	Ապամոնտաժված փայտե հենասյուների փոխադրում ուղեգծով /մինչև 7,5մ երկարության/	հատ		3.261
38	Կ33-532	Ապամոնտաժված փայտե հենասյուների փոխադրում ուղեգծով /7,5մ և ավելի երկարության/	հատ		6.465
39	Կ33-534	Ապամոնտաժված հեծանների, ամրակապման դետալների, ցցաձողերի, մեկուսիչների, հաղորդալարերի իրենց տարաներով և այլ բեռերի փոխադրում ուղեգծով /6-10կվ լարման/	տ		44.934
40	Ընդ ժող. 2.10 կետ	Ապամոնտաժվող այլ աշխատանքները որոնք նշված չեն կիրառելի են մոնտաժվող աշխատանքների q=0,5 գործակիցով/իրենց միավորի արժեքով և առանց նյութի արժեքի/			
41	Կ33-473	Օդային գծերի էլեկտրական հաղորդալարերի կախում ցցաձողային մեկուսիչների վրա, առանց նյութերի արժեքի (1կմ-ում 10 հենականգնակի դեպքում, 6-10կվ լարում, չբնակեցված տարածքում)	կմ		114.637
42	Կ33-401	Փայտե հենասյան տեղակայում /մեկ հատ/ առանց արժեքի	հատ		10.316
43	Կ33-401 կիրառ q=0,8	Փայտե հենասյան ուղղում	հատ		8.253

44	Կ33-515	Հոդանցման հաղորդաշղթայի սարքվածք մեկ էլեկտրոդից երկարությունը մինչև 5մ, հորիզոնական հողակցման հաղորդաթիթեղով երկարությունը մինչև 1մ /առանց նյութի արժեքի/	լր		10.855
45	Կ33-516	Հավելում ամեն հաջորդ էլեկտրոդի համար, երկարությունը մինչև 5մ /առանց նյութի արժեքի/	հատ		5.207
46	Կ33-518	Հավելում ամեն հաջորդ մետր հորիզոնական հողակցման հաղորդածողի համար /առանց նյութի արժեքի/	մ		2.001
47	8-69-1 կիրառ. q=0,33	Պարպիչի 6-10կվ, մեկուսիչի 1-10կվ և անցումային մեկուսիչի 6-10կվ փոխարինում/կամ տեղադրում/, մեկ ֆազի համար առանց արժեքի /լրացուցիչ աշխատանք/	հատ		1.811
48	Կ33-520	Զատիչի 6-10կվ տեղակայում հենականգնակի վրա, առանց զատիչի՝ իր ձեռքի շարժաբեր անջատիչով, և նյութերի արժեքի /ծախս՝ հեղուկս մանեկ 1,75կգ; պող. ձող Փ10մմ 11,2կգ; մետ ամրակապեր 44,8կգ/	լր		22.317
49	Կ33-534	Հեծանների,ամրակապման դետալների, ցցաձողերի, մեկուսիչների, հաղորդալարերի իրենց տարաներով և այլ բեռների փոխադրում ուղեգծով /6-10կվ լարման/	տ		44.934
50	8-141-2	Մալուխի փռում, մինչև 35կվ պատրաստի խրամուղում առանց ծածկի, զանգված 1մ մինչև 6կգ/առանց մալուխի արժեքի/	100մ		26.323
51	8-142-1	Ավազե անկողնակի պատրաստում մեկ մալուխի համար խրամուղում /առանց ավազի արժեքի/	100մ		29.017
52	8-143-3	Մեկ մալուխի ծածկումը բետոնե սալիկներով/առանց արժեքի/	100մ		31.946
53	8-146-2	Մալուխ մինչև 35կվ, անցկացվող ամրակապով, փրադիր ամրակներով, զանգված 1մ մինչև 6կգ /առանց մալուխի արժեքի/	100մ		96.983
54	8-147-1	Մետաղական մալուխային պատրաստվածքներ, դարակ-բարձակ /առանց արժեքի/	տ		126.133
55	8-147-2	Մետաղական մալուխային պատրաստվածքներ, Π-աձև տեսակի ամրակապեր /առանց արժեքի/	տ		90.481
56	8-149-3	Մալուխ մինչև 35կվ, երկարաձգվող խողովակների, բլոկների, սակառների մեջ, զանգված 1մ մինչև 6կգ /առանց մալուխի արժեքի/	100մ		28.915
57	8-150-5	Մալուխ, կախված շենքից դուրս մեկ մետաղաճոպանի վրա, զանգված 1մ մինչև 4կգ /առանց մալուխի արժեքի/	100մ		68.19
58	8-153-(5-8) կիրառ միջ.	Երկջիղ-քառաջիղ թղթե, պլաստմասե կամ ռետինե մեկուսիչով մալուխի ծայրաբացում, լարումը մինչև 1կվ, կտր. 16-ից մինչև 240քմմ /առանց միացման մասերի արժեքի/	հատ		2.861
59	8-153-(9-12) կիրառ միջ.	Երկջիղ-քառաջիղ թղթե, պլաստմասե կամ ռետինե մեկուսիչով մալուխի ծայրաբացում, լարումը մինչև 10կվ, կտր. 16-ից մինչև 240քմմ /առանց միացման մասերի արժեքի/	հատ		4.417
60	8-169-3	Ջիղի՝ հաղորդալարերի կամ մալուխների, միացում սեղմակներին, կտր. մինչև 16քմմ /առանց միացման մասերի արժեքի/	100 հատ		17.274
61	8-169-6	Ջիղի՝ հաղորդալարերի կամ մալուխների, միացում սեղմակներին, կտր. մինչև 150քմմ /առանց միացման մասերի արժեքի/	100 հատ		47.692
62	8-177-1	Պաշտպանիչ պատյան իրականացում կցորդիչների համար /առանց արժեքի/	հատ		1.772
63	8-181-1	Միացնող կցորդիչի ամրացում, եռաջիղ մալուխի համար լարումը 10կվ, կտր. մինչև 95քմմ /առանց միացման մասերի արժեքի/	հատ		13.644
64	8-181-2	Միացնող կցորդիչի ամրացում, եռաջիղ մալուխի համար լարումը 10կվ, կտր. մինչև 150քմմ /առանց միացման մասերի արժեքի/	հատ		17.355
65	8-182-3	Քառաջիղ մալուխների ջիղերի ծայրային մեկուսացում ինքնասոսինձվող ժապավեններով և ջերմանստեցվող պոլիամիդային փողակներով լարումը 1կվ, կտր. մինչև 95քմմ /առանց մեկուսացման մասերի արժեքի/	հատ		6.096
66	8-182-4	Քառաջիղ մալուխների ջիղերի ծայրային մեկուսացում ինքնասոսինձվող ժապավեններով և ջերմանստեցվող պոլիամիդային փողակներով, լարումը 1կվ, կտր. մինչև 185քմմ/առանց մեկուսացման մասերի արժեքի/	հատ		6.594
67	8-182-6	Եռաջիղ մալուխների ջիղերի ծայրային մեկուսացում ինքնասոսինձվող ժապավեններով և ջերմանստեցվող պոլիամիդային փողակներով լարումը 10կվ, կտր. մինչև 120քմմ /առանց մեկուսացման մասերի արժեքի/	հատ		6.325
68	8-700-8	Մալուխի ժապավենային զրահի հանում	մ		0.125
69	8-366-1	Մետաղական լայնակ մեկուսիչներով, ցցաձողների քանակը 2/առանց արժեքի/	հատ		1.803

70	8-366-2	Մետաղական լայնակ մեկուսիչներով, ցցածողների քանակը 3/առանց արժեքի/	հատ		1.866
71	8-368-4	Հաղորդալարերի/մալուխի/ ձգում հեծանների վրա մետաղական և երկաթբետոնե հենարաններով, կտր, մինչև 70քմմ, հենարանների քանակը 1կմ վրա, մինչև 32 /առանց արժեքի/	կմ		98.936
72	8-370-3 կիրառ	Դրսի լուսատուի մոնտաժում կամ փոխարինում /առանց արժեքի/	հատ		5.59
73	8-374-2	Էլեկտրական հաղորդալար անցումներում կապերի գծերի միջով, լուսավորության ցանցերով և այլ խոչնդոտներով, կտր մինչև 35քմմ /առանց արժեքի/	հատ		4.31
74	8-525-2	Ավտոմատ միաբևեռ, երկբևեռ, եռաբևեռ անջատիչի տեղադրում կոնստրուկցիաների վրա, պատերի կամ սյուների վրա, հոսանքը մինչև 63Ա/առանց արժեքի/	հատ		2.361
75	8-526-6	Ավտոմատ եռաբևեռ, անջատիչի տեղադրում արկղներում, կոնստրուկցիաների վրա, պատերի կամ սյուների վրա, հոսանքը մինչև 250Ա /առանց արժեքի/	հատ		6.062
76	8-526-7	Ավտոմատ եռաբևեռ, անջատիչի տեղադրում արկղներում, կոնստրուկցիաների վրա, պատերի կամ սյուների վրա, հոսանքը մինչև 630Ա /առանց արժեքի/	հատ		13.557
77	8-531-1	Մագնիսային գործարկիչի տեղադրում, հոսանքը մինչև 40Ա, առանց արժեքի	հատ		3.403
78	8-531-2	Մագնիսային գործարկիչի տեղադրում, հոսանքը մինչև 100Ա, առանց արժեքի	հատ		4.294
79	8-574-58 կիրառ	Ժամանակի ռելեի, լուսային տվիչի տեղադրում	հատ		1.368
		Նյութեր, պատրաստվածքներ և սարքավորումներ /արժեքը/			
		Ավազ տարբեր տիպի			
80	իտ	Գետի ավազ /արժեքը/	մ³		2.266
		Խիճ տարբեր տեսակի և չափամասերի			
81	իտ	Բազալտե խիճ, 15-20մմ /արժեքը/	մ³		5.5
82	իտ	Ճեղքված բազալտ խիճ /արժեքը/	մ³		4.49
		Ցեմենտ			
83	իտ	Ցեմենտ Մ-400 (CEM-II/A-P, 42,5N) /արժեքը/	տ		56.122
		Ասֆալտբետոնե խառնուրդներ			
84	իտ	Ասֆալտբետոն Բ տիպի, վերին շերտ /արժեքը/	տ		32.326
		Բետոնե սալիկ, հեղույս մանեկ			
85	իտ	Բետոնե սալիկ 390*190*60մմ չափի /արժեքը/	հատ		0.151
86	իտ	Հեղույս մանեկ /արժեքը/	կգ		1.347
		Պողպատե կառուցատարրեր			
87	իտ	Պողպատե ուղղանկյուն կտրվածքի խողովակներ /արժեքը/	տ		556.858
88	իտ	Պողպատե անկյունակներ /արժեքը/	տ		617.55
89	իտ	Շերտապողպատներ տարբեր չափի /արժեքը/	տ		559.781
90	իտ	Պողպատե ձողեր տարբեր չափի /արժեքը/	տ		587.595
91	իտ	Պողպատե թիթեղներ տարբեր չափի /արժեքը/	տ		580.873
92	իտ	Պողպատե տաշտաձև հեծան տարբեր չափի /արժեքը/	տ		633.457
93	իտ	Պողպատե երկտավր տարբեր չափի /արժեքը/	տ		661.756
94	իտ	Պողպատե խողովակներ տարբեր չափի /արժեքը/	տ		520.626
		Հենասյուներ ՍՎ տարբեր տիպի			
95	իտ	Երկաթբետոնե հենասյուն ՍՎ-10,5-3,5 (Մ300) /արժեքը/	հատ		97.773
96	իտ	Երկաթբետոնե հենասյուն ՍՎ-9,5-1 (Մ300) /արժեքը/	հատ		72.101
		Ալյումինե հաղորդալարեր			
97	իտ	Ալյումինե, АПВ,1x2,5մմ² /արժեքը/	գծմ		0.036
98	իտ	Ալյումինե, АПВ,1x4մմ² /արժեքը/	գծմ		0.053
		Ալյումինե մալուխներ			

99	իտ	Այլումինե, ԱԲԲԳ 4x50մմ² /արժեքը/		գծմ	2.142
	Ընդամենը՝				7504.538
	ԱԱՀ 20%				1500.908
	ԸՆԴԱՄԵՆԸ՝				9005.446

Հ/հ	Մարզ	գործակ ից
Ն		***1.0000***
1	Երևան	1.0572
2	Արմավիր	1.0615
3	Արարատ	1.07
4	Արագածոտն	1.0679
5	Կոտայք	1.0657
6	Գեղարքունիք	1.0898
7	Վայոց Ձոր	1.0761
8	Լոռի	1.0893
9	Շիրակ	1.088
10	Սյունիք	1.129
11	Տավուշ	1.132

Ծանոթություն
Սույն աշխատանքների համար պլանավորված առավելագույն գինը կազմում է 100 000 000 ՀՀ դրամ:

Նյութերի, պատրաստվածքների և սարքավորումների գները ընդունել 2018թ-ի թիվ 09 ինֆորմացիոն տեղեկագրից, դրանց բացակայության դեպքում՝ 04.10.2016թ. ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ՝ <<Հաշվարկային փաստաթուղթը և դրա կազմումը>> հոդվածի 2-րդ մասով նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերով, կիրառելով պայմանագրի գործակիցը:

Նյութերի, պատրաստվածքների, սարքավորումների վրա տրանսպորտային (նյութերի տեղափոխման) ծախսերի գործակիցները պետք է կիրառել համաձայն վերը նշված մարզային գործակիցների:
Շինանյութերն ու սարքավորումները ձեռք են բերվում կապալառու կազմակերպության կողմից՝ բացառապես շինարարական աշխատանքներում օգտագործելու համար՝ ըստ շինարարական նորմերի չափորոշիչների:

Աշխատանքների կատարման վայրը՝ ՀՀ ՊՆ զորամասեր:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ԴԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Սաշիկ և Սևակ եղբայրներ» ՍՊԸ
տնօրեն

Խ. ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված N 2
ԲՄԱՇՁԲ-10/6-1 *ծածկագրով պայմանագրի*

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ՕՐԱՑՈՒՅԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՅԼ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԱՅԼ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						
Հ/հ	CPV	չափման միավորը	ընդհանուր քանակը	ընդհանուր առավելագույն գինը՝ ՀՀ դրամ	կատարման	
					հասցեն	ժամկետը
1	45311146/1/9/1	դրամ	1	100 000 000	ՀՀ ՊՆ զորամասեր	III-IV եռամսյակներ, բայց ոչ ուշ, քան 20.12.2019թ.

Աշխատանքներն իրականացվելու են՝ համաձայն ԿՇ և ՋԲ վարչության հայտերի հիման վրա, 2019թ. III-IV եռամսյակների ընթացքում՝ առավելագույն գնի սահմաններում, համաձայն հաստատված թերությունների ակտերի և համաձայնեցված գնման ժամանակացույց-օրացուցային գրաֆիկի:

Հավելված N 3
ԲՄԱՇՁԲ-10/6-1 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի									
Հ/հ	CPV	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում						Առավելագույն գին /ՀՀ դրամ/
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր բայց ոչ ուշ, քան 25.12.2019թ.	
1	45311146/1/9/1	Այլ էլեկտրական մոնտաժային աշխատանքներ	70 000 000	70 000 000	70 000 000	100 000 000	100 000 000	100 000 000	100 000 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Սաշիկ և Սևակ եղբայրներ» ՍՊԸ
տնօրեն

Խ. ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված N 4
ԲՄԱՇՁԲ-10/6-1 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
ԲՄԱՇՁԲ-10/6-1 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն